Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

396
Կ-21

ՀԿԿ[illegible](բ) Լենգավկոմի Ագիտ-պրոպ. բաժին

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

(1925 ԹՎԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ)

300
78-ԿԱ

ԼԵՆԻՆԱԿԱՆ
1925

56.014
396
1-21
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
0120-10
300
378-ԿԱ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

(1925 թ. վերընտրությունների առիթով)

1. ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության կազմակերպությունների կից պատգամավորական ժողովները հանդիսանում են Կ. Կ. կուսակցության ազդեցության տարածողը՝ անկուսակցական բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաների մեջ: Պատգամավորական ժողովները միաժամանակ՝ թե՛ կոմմունիզմի մասսայական դպրոց են և թե իբրև գործնական նախապատրաստական դպրոց՝ մասսաներին նախապատրաստելու հասարակական, քաղաքական աշխատանքի համար:

Երբ ներկայումս կուսակցության և Խորհրդային իշխանության առաջ դրված են գյուղի ու քաղաքի կապի ամրացման, արդյունաբերության և գյուղատնտեսության բարձրացման, խորհուրդների գործունեության կենդանացման խնդիրները—գյուղի և քաղաքի կանանց լայն մասսաների ակտիվ մասնակցությունը՝

Գրառեկավար 685 Պ. № 41 Տիրաժ 300
Պետհրատի IV տպարան Լենինականում

4 MAR 2014

յերկրի շինարարության բոլոր ասպարեզներում առանձին նշանակություն և ստանում։ Կանացի մասսաներին աշխատանքի քաշելու համար կուսակցության կատարած աշխատանքներից արդեն փորձի բովից անցած ձևը՝ պատգամավորական ժողովներն են։

Կուսակցության կազմակերպությունները պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնեն պատգամավորական ժողովների աշխատանային վերընտրությունները նախապատրաստելու և կիրառելու՝ նպատակ դնելով պատգամավորական ժողովների ազդեցությամբ ընդգրկել դեռևս հասարակական կյանքի չքաշած բանվորուհիների և գեղջկուհիների ավելի շատ խավեր։

Անհրաժեշտ է պրոլետարական և դյուղացիական խավերի ուշադրությունը գրավել պատգամավորական ժողովների աշխատանքների վրա և նրանց միջոցով նպաստել վերացնելու այն վերաբերմունքը գեպի աշխատավոր կինը, ըստ որի նա հեղափոխական պայքարին և խորհրդային յերկրի շինարարությանը իրավահավասար մասնակիցը չէ։

Պատգամավորական ժողովների յերկու տարվա աշխատանքի փորձը ցույց տվեց, որ պատգամավորական ժողովների կազմի և աշխատանքի վերաբերյալ անհրաժեշտ և հետևյալ կանոնները սահմանել.

2. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1. Պատգամավորական ժողովները, իբրև ինքնուրույն միավորներ՝ կազմակերպվում են.

ա) Յերեսուն և ավելի բանվորուհիներ ունեցող գործարանների և արհեստանոցների կուսակցական բջիջներին կից։

բ) Մանր ձեռնարկությունների բանվորուհիների և ցրված աշխատավորուհիների համար՝ շրջկոմներին և գավկոմներին կից։

2. Գործարանին կից յեղած պատգամավորական ժողովները համախմբում են տվյալ գործարանի բանվորուհիներին, ծառայողներին և բանվորների կանանց։ Գավկոմներին և շրջկոմներին կից պատգամավորական ժողովները համախմբում են այն գործարանների բանվորուհիներին,—վորտեղ չկան ինքնուրույն պատգամավորական ժողովներ,—հիմնարկությունների ծառայողներին, բանվորների կանանց և աշխատավոր կանանց այլ խավերին։

3. Յուրաքանչյուր պատգամավորական ժողովում չպետք է լինի 60 պատգամավորուհուց ավելի և վոչ էլ՝ 30-ից պակաս։ Յերևանի և Լենինականի տնային ծառայողներից կազմել առանձին պատգամավորական ժողովներ։

Մանրություն.—Այն քաղաքներում, ուր պատգամավորական ժողովները մեկից ավելի յեն՝ գավկոմների վորոշման համաձայն, նրանք կցվում են վորևե կոմբջիջին։

4. Պատգամավորներն ընտրվում են հետևյալ կարգով. ա) ձեռնարկության բանվորուհիների ընդհանուր ժողովում (կարելի յե նաև բանվորների միացյալ ժողովներում), բ) հիմնարկություններում՝ ծառայողների ընդհանուր ժողովում, գ) տնայինագործական արտելների կանանց ժողովում, դ) տնային ծառայողների համաքաղաքային ժողովներում, յե) բանվորների կանանցից (տնտեսուհիներից), վորոնց ժողովը հրավիրվում է ամուսնու աշխատավայրում։

Մանրություն.—Մանր հիմնարկություններում և ձեռնարկություններում ընտրությունները հնարավոր և կատարել մի քանի ձեռնարկությունների և հիմնարկությունների միացյալ ժողովում։

5. Այն գործարաններում, ուր բանվորուհիներից, բանվորների կանանցից և ծառայողներից կազմակերպված են ինքնուրույն պատգամավորական ժողովներ, ներկայացուցչական նորման սահմանվում է յուրաքանչյուր մի պատգամավոր։ Բանվորների կանանց և ծառայողների համար ներկայացուցչական նորման յուրաքանչյուր անգամ տեղերում սահմանում են կուսակցական կոմիտեները այն հաշվով, որ մեծամասնությունը կազմեն բանվորուհիները, ստորին ծառայողները և տնայնագործուհիները։

6. Պատգամավորուհիներ ընտրելիս անհրաժեշտ է աշխատել կարգավորել նաև պատգամավորուհիների կազմն ըստ հասակի։ Պատգամավորական ժողովներում պառավ բանվորուհիների (50—60 տարեկան) գերակշռությունը հաճախ այդ ժողովները դարձնում են քիչ աշխատունակ, իսկ յերիտասարդության գերակշռությունը չի նպաստում պատգամավորական ժողովների հեղինակությանը։

7. Պատգամավորական ժողովների ժամկետը սահմանվում է մեկ տարի։ Ամեն տարի պատգամավորական ժողովների կազմի մեջ ընտրվելու յեն նոր, դեռևս չգրավված կանանց կադրեր։

Ծանոթություն.—Հին պատգամավորուհուն պատգամավորական ժողովի նոր կազմի մեջ չպետք է մտցնել. սակայն այդ հանգամանքը բոլորովին չի արգելում կին-բաժիններին նրանց մեջ աշխատանք տանելու պարտականությունից (առաջ քաշել նրանց ընտրովի մարմինների, կուսակցության, քաղգրագիտական դպրոցների մեջ և դրավել նրանց ոգնելու նոր պատգամավորական աշխատանքներին)։

8. Պատգամավորուհիներին զանազան պարտականություններով չծանրաբեռնելու համար ընտրովի մարմիններում աշխատող բանվորուհիներին չընտրել պատգամավորական ժողովի կազմի մեջ, նկատի ունենալով, որ նրանք արդեն անցել են պատգամավորական ժողովների ստաժը։

9. Պատգամավորական ժողովներն ամեն տարի վերընտրվում են այն հաշվով, որ նրանք հոկտեմբերի կեսից վոչ ուշ անցնեն սիստեմատիք աշխատանքի։ Պատգամավորական ժողովների ծրագրային մասը պետք է ավարտվի մինչև մայիս։ Ամարային ամիսները ոգտագործել գլխավորապես պատգամավորուհիներին ստուգելու, կատարված աշխատանքը հաշվի առնելու, պատգամավորուհիների համար եքսկուրսիաներ, բացոթյա դրույցներ կազմակերպելու համար հայլն։

10. Պատ. ժողովների աշխատանքն ավարտվում է սեպտեմբերին հանդիսավոր նիստով և կուսակցության մեջ մտնող պատգամավորուհիները կուսակցության մեջ անցնելով, միաժամանակ կատարված աշխատանքներն ու նվաճումները ի մի գումարի յեն բերվում այն իմաստով, թե պատգամավորուհիներին ինչ չափով ենք առաջ քաշել կուսակցության, ԼԿՅԵՄ, գործնական աշխատանքների, խորհուրդների, արհմիությունների, կոոպերատիվների հայլն։

3. ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Յուրաքանչյուր պատ. ժողով հրավիրվում է ամիսը յերկու անգամ։ Բացի դրանից ամիսը մեկ ան-

գամ եվ հրավիրվում է քաղաքի բոլոր պատգամավորուհիների միացյալ ժողով։ Խոշոր կենդրոններում, ուր հնարավոր չէ բոլոր պատգամավորական ժողովները մի տեղ հավաքել՝ յերեք ամիսը մեկ անգամ գումարվում է ամբողջ քաղաքի պատգամավորուհիների կոնֆերանս։

2. Պատ. ժողովների ամբողջ աշխատանքի մեջ անհրաժեշտ է սահմանել ճիշտ ներդաշնակություն աշխատանքի տեսական և գործնական մասերի միջև։ Պատ. ժողովները պատգամավորուհիներին պարտավոր են տալ քաղաքական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը և գործնական-հասարակական աշխատանքի վորոշ փորձառություն։

3. Պատգամավորուհին անհրաժեշտորեն պիտի ունենա գործնական աշխատանք, միաժամանակ նրանց ծանրաբեռնելուց խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել, վոր յուրաքանչյուր պատգամավորուհի կատարելու յե միայն մի գործնական պարտականություն։

4. Պատ. ժողովների պլենումներին ամեն անգամ դրվում է վոչ ավելի, քան մեկ հարց այն ծրագրից, վոր տրված է ՀԿԿԿ (բ) 1925 թ. համար և տեղական կյանքից վերցրած գործնական հարցեր (պատգամավորուհիների զեկուցումները սեկցիաներում կատարած աշխատանքների մասին, պատ. ժողովներում ընտրված առանձին հանձնաժողովների զեկուցումները)։

5. Վորպեսզի պատ. ժողովները լավ արդյունքներ տան, անհրաժեշտ է յուրաքանչյուր ժողով լավ նախապատրաստել՝ հետաքրքիր որակարգ, լավ զեկուցողների ընտրություն, զննական ձեռնարկներով ապահովելու հայցն, վորոնք կընպաստեն պատ. ժողովների կենդանացմանը և կընդհանրացրեն պատգամավորուհիներին։

6. Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի չխախտվի պատգամավորուհիների հետ տարվող ծրագրային աշխատանքի սիստեմը։ Պատգամավորուհիների համար հատուկ խմբակներ և քաղաքագիտական դպրոցներ չպետք է ստեղծել, միայն վորպես բացառություն, կարելի յե թույլ տալ, վոր առանձին առաջադեմ պատգամավորուհիները մտնեն քաղաքագիտության ընդհանուր դպրոցներ ու խմբակներ։

Մանրություն.—Առանձին խմբակների կազմակերպումը թույլատրելի յե միայն ազգային փոքրամասնությունների համար։

7. Ի նկատի ունենալով խորհրդային ապպարատի կենդանացնելու համար ձեռք առնվող միջոցները, անհրաժեշտ է պատգամավորուհիներին քաղխորհրդի սեկցիայի մեջ մտցնել, ուր նրանք աշխատելու յեն խորհրդի անդամների հետ հավասար չափով։

8. Պատ. ժողովներին կից կազմակերպվում են սեկցիաներ՝ արհեստակցական, կոոպերատիվ, մայրության ու մանկության պաշտպան և լիկվիդացիոնական, վորոնք աշխատելու յեն ՀԱՄԽ-ի, Հայկոոպի, Արդժողկոմատի, Առժողկոմատի ու Կենդկին-բաժնի հետ միասին մշակած ծրագրով։

Մանրություն.—Յեթե հնարավոր է պատգամավորուհիներին մտցնել ակումբներին կից յեղած արհեստակցական խմբակներն ու սեկցիաները, հատուկ սեկցիաներ պատ. ժողովներին կից կարելի յե չկազմակերպել։

9. Պատ. ժողովների աշխատանքները ղեկավարելու համար պետք է առաջ քաշել լավագույն պրոպագանդիստական ուժերը՝ սեկցիաների աշխատանք-

ները զեկավարելու համար՝ պատասխանատու ընկերներին համապատասխան հիմնարկություններից։

10. Բանվորուհի-պատգամավորուհիներն ու ծառայողները պետք է ոգտագործվեն այս կամ այն հասարակական աշխատանքների համար՝ իրենց ձեռնարկության կամ հիմնարկության մեջ, գործկոմի հանձնաժողովներում, տեղական կոոպերատիվում, կոնսուլտացիաներում, հասարակական ճաշարաններում և այլն։ Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել պատգամավորուհիներին արտադրական խորհրդակցությունների և խմբակների մեջ գրավելու վրա։

Տնային տնտեսուհիների և տնայնագործների պատգամավորուհիներին պիտի գրավել՝ մասնակցելու կոոպերացիայի վարչություններում և հիմնարկություններում, մանկատներում, մանկապարտեզներում և այլն։

11. Պատգամավորուհիներից պիտի կազմել ակտիվ աջակցելու՝ «Կորչի անգրագիտությունը» ընկերության աշխատանքներին, վորպեսզի ուժեղանա աշխատանքը՝ կանանց մասսաների միջից անգրագիտությունը և կիսագրագիտությունը վերացնելու համար։

Բոլոր անգրագետ, կիսագրագետ պատգամավորուհիները պետք է հաճախեն համապատասխան դպրոցներ. իրանց անգրագիտությունը վերացնող պատգամավորուհիներն ազատվում են ուրիշ գործնական աշխատանքներից։

12. Պատգամավորուհիների մի մասին պիտի քաշել աշխատանքի՝ «Ցերեխաների բարեկամների», ՄՈՊՐի և այլ ընկերությունների աշխատանքներին։

13. Շեֆկոմբջիջների միջոցով պատգամավորուհիները պետք է լծվեն գյուղի շեֆության աշխատանքներին։ Ձեռնարկությունների քաղաքային պատ. ժողովները պիտի կապ պահպանեն գեղջկուհիների յենթաշեֆ գյուղերի պատ. ժողովների հետ և պիտի ոգնեն նրանց աշխատանքներին։

14. Պատգամավորուհիներին պիտի գրավել «Հայաստանի Աշխատավորուհու» և այլ թերթերի ընթերցման, ընտրել նրանցից և նրանց ոգնությամբ բաժանորդներ ու բանթղթակիցներ։ Պատգամավորուհի-թղթակիցները՝ իբրև կանոն, պետք է մտնեն ընդհանուր բանթղթակիցների խմբակները. սկսնակ բանթղթակցուհիների համար, առանձին դեպքերում, կարելի յե կազմակերպել հատուկ սեկցիաներ՝ պատ. ժողովներին կից։ Այդ սեկցիաները կապվելու յեն ընդհանուր բանթղթակիցների շարժման հետ։

15. Անհրաժեշտ և պատգամավորուհիներին գրավել կոմկուսակցության և ԼԿՅԵՄ բջիջների դռընբաց նիստերին, և գրավել նրանց՝ ոգնելու բանվորուհիների բջջային կազմակերպչի աշխատանքներին։

16. Նպատակ ունենալով աշխատավոր կանանց ծանոթացնել այն հիմնարկությունների աշխատանքների հետ, ուր ամրացած են պատգամավորուհիները, ինչպես նաև քաղխորհրդի, պատ. ժողովների ու իրենց պատգամավորուհիների կատարած ամբողջ աշխատանքի հետ, յուրաքանչյուր պատգամավորուհի վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ պարտավոր է հաշիվ տալ իրեն ընտրողներին. բացի դրանից, պարբերաբար պատ. ժողովներին նա պարտավոր է հաշիվ տալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ կատարած իր աշխատանքների մասին։

Նման հաշվետվություններ պարբերաբար պետք

և անեն պատ. ժողովների կազմակերպիչները կոմբջիջների նիստերին՝ նրանցից ղեկավարող դիրեկտիվներ ստանալու համար։

Ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել պատգամավորուհիների հաշվետվության կամպանիա՝ իրենց ընտրողների առաջ. անհրաժեշտ է այդ կամպանիաները նախապատրաստել մանրակրիտ կերպով, ոգտագործել մամուլը, պատգավորուհիների աշխատանքի վրա կենդրոնացնել կուսակցության, խորհրդային ու հասարակական կազմակերպությունների և աշխատանքի լայն մասսաների ուշադրությունը։

4. ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Շնորհիվ այն բանի, վոր մենք բոլոր գյուղերում կուսբջիջներ չունենք, վորոնց ղեկավարությամբ աշխատելու յեն գեղջկուհիների պատգամավորուհիները, ուստի վերջինները կազմակերպվում են.

ա) Այն գյուղերում, ուր կան կոմբջիջներ։

բ) Այն գյուղերում, ուր շրջկոմը կամ մոտակա կոմբջիջը իր ղեկավարությունը կարող է կիրառել առանձին կոմմունիստների կամ գեղջկուհիների կազմակերպչի միջոցով։

գ) Այն գյուղերում, ուր գեղջկուհիների պատ. ժողովը պարբերաբար կարող է սպասարկվել կուլտշեֆական բջջի կողմից։

2. Վորպեսզի պատ. ժողովների ընտրություններին և նրանց աշխատանքներին վորքան կարելի յե գեղջկուհիների մեծ մասսաներ գրավել. պատգամավորուհիների ընտրություններն անհրաժեշտ է կատարել գեղջկուհիների ժողովներում, ըստ թաղերի, կամ բաժանելով գյուղը 20—50-ական խրճիթների։

3. Իբրև կանոն պատգամավորուհիներն ընտրվում են գեղջկուհիների ժողովներում բայց այն գյուղերում, ուր հնարավորություն կա վերընտրությունների համար ավելի մեծ նախապատրաստական աշխատանքներ տանել, կարելի յե թույլ տալ, վոր ընտրությունները կատարվեն ընդհանուր գյուղական ժողովներում (գյուղացիները մասնակցելու յեն խորհրդակցական ձայնով)։

4. Գեղջկուհիներից ներկայացուցչական նորման սահմանում են տեղերում դավկոմն ու շրջկոմը այն հաշվով, վոր գյուղական պատ. ժողովի պատգամավորուհիների թիվը 40-ից անց չլինի և ըստ՝ հնարավորության, վոչ էլ 20-ից պակաս։

5. Գեղջկուհիների պատ. ժողովները կազմվում են չքավոր, միջակ գեղջկուհիներից ու բատրակուհիներից։

Գյուղական աղգաբնակության մեջ գերակշռող միջակ գեղջկուհիները ևս մեծ թվով գրավելու յեն պատ. ժողովները։ Անհրաժեշտ է պատ. ժողովների մեջ գրավել ընտանիքավոր գեղջկուհիներին, ինչպես նաև յերիտասարդ աղջիկներին։ Ցանկալի յե պատ. ժողովների կազմի մեջ գրավել նաև մեզ մոտ կանգնած առանձին գյուղական ուսուցչուհիներին։

6. Անհրաժեշտ է, վոր պատ. ժողովներում վորոշ քանակով լինեն նաև նախորդ պատ. ժողովի պատգամավորուհիները. բացի դրանից այն գյուղերում, ուր առաջ աշխատանքը թույլ ելր տարվում և ուր ակտիվ գեղջուհիների թիվը քիչ է, պատ. ժողովներում մըտցնել կուսակցության թեկնածուներին, ԼԿՅԵՄ անդամներին, խորհուրդներում, կոոպերացիաներում, վոխ-

ոգկոմներում ընտրությամբ աշխատող գեղջկուհիներին։

Այնտեղ, ուր պատ. ժողովի կազմի մեջ աննպատակահարմար է մտցնել կուսակցության և ԼԿՅԵՄ բոլոր անդամներին ու ընտրված գեղջկուհիներին, անհրաժեշտ է մտցնել միայն նրանց, որոնք կարիք են զգում վերապատրաստվելու, իսկ մնացածներին անհրաժեշտ է գրավել պատ. ժողովների աշխատանքներին։

7. Պատգամավորական ժողովները վերընտրվելու յեն անմիջապես դաշտային աշխատանքները վերջանալուց հետո այն հաշվով, որ նրանք հոկտեմբերի կեսից վոչ ուշ անցնեն սիստեմատիք աշխատանքների։ Պատ. ժողովները իրենց ծրագրային աշխատանքներն ավարտելու յեն դաշտային աշխատանքների սկզբին։ Պատ. ժողովների պարապմունքները վերջացնելն ու նրան ավարտելը պիտի ոգտագործել՝ հրավիրելով գյուղացիական լայն մասսաների ուշադրությունը դեպի պատգամավորուհիների աշխատանքը։

8. Պատ. ժողովների վերընտրության կամպանիան պիտի տարվի իբրև ինքնուրույն կամպանիա, որի աշխատանքներին անմիջապես մասնակցելու յեն կուսակցական, խորհրդային, արհեստակցական, կոոպերատիվ և այլ կազմակերպություններ, ինչպես նաև գյուղացիական լայն մասսաները։

Վերընտրություններից առաջ պիտի դնել պատգամավորուհիների հաշվետվությունները իրենց կատարած աշխատանքների մասին.

5. ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Գեղջկուհիների պատ. ժողովները հրավիրվում են ամիսը յերկու անգամ։ Պատ. ժողովների աշխատանքը պիտի այնպես դնել, որ ուշադրության մեծ մասը նվիրվի գյուղի գործնական կյանքին։

2. Յերեք ամիսը մեկ անգամ պարբերաբար հրավիրելու յեն պատգամավորների ընդհանուր շրջանային ժողովներ։ իսկ այն տեղերում, ուր ընդհանուր ժողովներ հրավիրել չի կարելի, պետք է հրավիրել պատգամավորուհիների կոնֆերենցիաներ՝ շրջանային մասշտաբով։

3. Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել պատգամավորուհիներին գրագիտություն սովորեցնելու համար. այդ նպատակով պիտի աշխատել անգրագիտության վերացման կյանները մոտեցնել պատ. ժողովների գտնված վայրերին, կազմակերպել անգրագիտության վերացման խմբակներ, կիրառել անհատական և խմբակային ուսուցում և ամրացնել անգրագետ պատգամավորուհիներին գրագետների աջակցությամբ։

4. Պատգամավորուհիներին պետք է գրավել գյուղացիների հասարակական ժողովներին, համագումարներին ու կոնֆերենցիաներին, ինչպես նաև կուսակցական, խորհրդային ու հասարակական կամպանիաներ անցկացնելու աշխատանքներին։ Պատգամավորուհիներին ամեն կերպ պիտի քաջալերել խրճիթ-ընթերցարանները և գյուղի այլ հիմնարկների աշխատանքներին։

5. Պատգամավորուհիներին պետք է գրավել «Հայաստանի Աշխատավորուհու» և «Մաճկալ»-ի ընթերցման. առաջ քաշել նրանցից գյուղ-թղթակցուհիներ. պատգամավորուհի գյուղթղթակցուհիներին պիտի մտցնել ընդհանուր գյուղ-թղթակիցների խմբակի մեջ. սակայն գյուղ-թղթակիցների համար առանձին դեպ-

քերում պատ. ժողովներին կից կարելի է կազմակերպել հատուկ սեկցիաներ։ Պատգամավորուհիներին և նրանց միջոցով գեղջկուհիների լայն մասսաներին պիտի բաժանորդագրել «Հայաստանի Աշխատավորուհուն» և «Մանկային»։

6. Գեղջկուհի-պատգամավորուհիներին պիտի քաշել գործնական աշխատանքների. այդ նպատակով նրանց անհատապես, կամ խմբերով, իբրև փորձվողներ, պիտի ամրացնել գյուղ-խորհուրդի սեկցիաներին, շրջգործկոմների բաժիններին և հանձնաժողովներին ու այլ հասարակական կազմակերպություններին։

7. Պատգամավորուհիներին այս կամ այն խորհուրդային ու հասարակական կազմակերպություններին ամրացնելը պետք է կատարվի հասարակական կազմակերպությունների վորոշումներով, վորոնք պարտավորեցնելու հիմնարկության ղեկավարներին հետևելու, վորպեսզի պատգամավորուհիներն աշխատանքի ընթացքում նպատակահարմար կերպով ոգտագործվեն, փորձվողների աշխատանքը ճիշտ հիմքերի վրա դրված լինի և կանոնավոր ղեկավարվի։ Պատգամավորուհի-փորձվողները իրենց աշխատանքի ընթացքում պետք է կապ պահպանեն ընտրողի գեղջկուհիների հետ։

8. Նպատակ ունենալով բոլոր պատգամավորուհիներից պատրաստել հասարակական աշխատավորներ և ի նկատի ունենալով, վոր բոլորին միաժամանակ այս կամ այն հիմնարկություններին, սեկցիաներին ու հանձնաժողովներին ամրացնել հնարավոր չէ, ուստի անհրաժեշտ է նրանց ամրացնել հերթով։ Յուրաքանչյուր պատգամավորուհի մեկ գործնական աշխատանքից ավելի չպետք է ունենա։

Պատգամավորուհիներին զանազան սեկցիաներում ու հանձնաժողովներում գործնական աշխատանք բաշխելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել առանձին պատգամավորուհիների ցանկությունն ու նպատակահարմարությունը։

9. Գեղջկուհիների պատ. ժողովները պետք է քաշել մանկատների, հրապարակների, կոնսուլտացիաների աշխատանքներին՝ նպատակ դնելով հնարավորություններ ստեղծել ոգնել նրանց հողը կոլեկտիվ կերպով հերկելու, սպիտակեղեն կարելու, ներկայացումներ կազմակերպելու և այլն։

10. Կուսակցական կազմակերպությունները տեղերում պետք է հաշվի առնված ունենան հին ու նոր պատգամավորուհիների ակտիվը. խորհրդային և հասարակական կազմակերպությունների համար ընտրություն կատարելիս՝ առաջին հերթին դնել թեկնածություններ նրանց միջից խորհուրդների, գործկոմների, կոոպերատիվ վարչությունների, փոխոգկոմների նախագահությունների, դպրոցական խորհուրդների անդամության համար, ինչպես նաև նրանց պետք է առաջ քաշել բոլոր համագումարների ու կոնֆերենցիաների համար։

11. Կուսակցական կազմակերպությունները պատգամավորուհիներին պետք է գրավեն կոմբյուրոյի դոնբաս նիստերին, յերիտասարդ աղջիկներին ԼԿՅԵՄ ժողովներին, և այդպիսով պիտի ապահովեն պատգամավորուհիների մերձեցումը բջիջների հետ և հեշտացնեն նրանց համար կուսակցության մեջ մտնելը։

12. Վորպեսզի գեղջկուհիների պատ. ժողովներն իսկական կուսակցությունը մասսաների հետ կապող ողակը լինեն, անհրաժեշտ է զրույցների և, վոր գլխավորն է, վոչ պակաս քան յերկու ամիսը մեկ անգամ տրվող սիստեմատիք հաշվետվությունների միջոցով սերտ կապ ստեղծել պատգամավորուհիների ու նրանց ընտրողների միջև։ Այդ հաշվետվությունները նախորդք պետք է մշակվեն պատ. ժողովներում ամբողջությամբ։ Ժամանակ առ ժամանակ պատգամավորուհիներ-

բի հաշվետվությունները պետք է դրվեն ընդհանուր-գյուղացիական հասարակական ժողովներում։

Պատ. ժողովների աշխատանքների մասին ժողովի կազմակերպչուհին պարբերաբար զեկուցելու յե նաև կոմբջիջի առաջ։

13. Պատ. ժողովները ղեկավարելու համար կուսակցական կազմակերպությունները տեղերում պետք է իբրև զեկուցողներ ու ղեկավարներ նշանակեն պատրաստված ընկերներին։

Բացի տեղական կուսբջիջներից պատ. ժողովները սիստեմատիքաբար պետք է սպասարկվեն շեֆական կազմակերպությունների կողմից, որոնք իրենց աշխատանքները կատարում են կին-բաժինների հետ համաձայնեցրած։ Պատ. ժողովների որակարգը, բանաձևերն ու զեկուցումները նախորոք պետք է մանրակրկիտ կերպով նախապատրաստվեն։

6. ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Առանձին պատգամավորուհու և ամբողջ պատ. ժողովի հաշվառման համար անհրաժեշտ է.

1. Յուրաքանչյուր պատգամավորուհու տոմս տալ (նմուշ՝ կենդ. կին-բաժնին) և նրա մեջ նշանառումներ անել պատգամավորուհու աշխատանքի մասին։ Այն պատգամավորուհին, որ առանց հարգելի պատճառով չի հաճախել պատգամավորական ժողով՝ վերընտրում է.

2. Յուրաքանչյուր պատգամավորուհի լրացնում է հարցաթերթիկը։

3. Ամեն ամիս կատարվող [illegible] հետևանքներն ի մի յեն գումարվում։

Հ.Ս.Ս.Հ. Գ.Ս.Ֆ.Ս.Հ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Գ.Ս.Ֆ.Ս.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясницкая

ՀՀ Ազգային գրադարան
NL0235867

56.014